ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[1]

Զեկույցի վերնագիր և ներածություն

1. ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության **հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով** (այսուհետ նաև՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն) 2024 թվականին կատարման ենթակա աշխատանքների իրականացման ընթացքը, ինչպես նաև իրականացված աշխատանքների մոնիթորինգի և գնահատման արդյունքների զեկույցը վերնագրված է որպես «Հաշվետվություն»: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության 3-րդ բաժնի «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի, գնահատումը և համակարգումը» 1-ին ենթաբաժնի 3-րդ կետի առաջին ենթակետում նշված է, որ ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, մոնիթորինգի և գնահատման համար պատասխանատու ստորաբաժանումը իրականացնում է «հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող միջոցառումների մոնիթորինգ, ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի կատարման մոնիթորինգ և գնահատում, դրանց հիման վրա զեկույցների կազմում»: Առկա է «մոնիտորինգի զեկույց» և «մոնիտորինգի ու գնահատման հաշվետվություն» եզրույթների անհամապատասխանություն զեկույցի վերնագրում և շարադրված տեքստում:

   Առաջարկություն

   - Զեկույցի վերնագիրը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության 3-րդ բաժնի «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի, գնահատումը և համակարգումը» 1-ին ենթաբաժնի 3-րդ կետի առաջին ենթակետի պահանջներին՝ «հաշվետվություն» բառը փոխարինելով «զեկույց» բառով:

2. Զեկույցը վերնագրված է «**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**», մինչդեռ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի

[1] https://moj.am/storage/uploads/,,,,,,,,,,.pdf

Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության 3-րդ բաժնի «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի, գնահատումը և համակարգումը» 1-ին ենթաբաժնի 3-րդ կետի առաջին ենթակետով պահանջվում է իրականացնել «հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող միջոցառումների մոնիթորինգ, **ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի կատարման մոնիթորինգ և գնահատում**, դրանց հիման վրա զեկույցների կազմում, համապատասխան մարմիններին ներկայացում միջոցառումների կատարմանն ուղղված առաջարկություններ»: Զեկույցի ներածությունում նշված է, որ «Մոնիթորինգի և գնահատման սույն տարեկան զեկույցով ներկայացված են 2024 թվականին կատարման ենթակա աշխատանքների իրականացման ընթացքը, ինչպես նաև իրականացված աշխատանքների մոնիթորինգի և գնահատման արդյունքները (այսուհետ նաև՝ գործոնային մոնիթորինգ)»: Զեկույցի վերնագիրը և զեկույցի շարադրված տեքստի բովանդակությունը չեն բխում ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության 3-րդ բաժնի «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի, գնահատումը և համակարգումը» 1-ին ենթաբաժնի 3-րդ կետի առաջին ենթակետով սահմանված մոնիտորինգի պահանջներից:

Առաջարկություն

- Զեկույցի վերնագիրը շարադրել «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության դրա իրականացման 2024 թվականի գործողությունների ծրագրի կատարման մոնիթորինգ և գնահատում» խմբագրությամբ:

3. Զեկույցի ներածություն բաժնում հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված աշխատանքների իրականացման (առաջընթացի) գնահատման արդյունքը գնահատված է հետևյալ վարկանիշային ցուցանիշներից որևէ մեկով՝
    - «կատարված է ամբողջությամբ (դիտարկվող ժամանակահատվածի համար **գործողությամբ** նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են)՝ 1 միավոր.
    - կատարված է մեծ մասամբ (դիտարկվող ժամանակահատվածի համար **գործողությամբ** նախատեսված աշխատանքների կեսը կամ կեսից ավելին են կատարվել)՝ 0.75 միավոր.
    - կատարված է մասնակի (դիտարկվող ժամանակահատվածի համար **գործողությամբ** նախատեսված որոշ աշխատանքներ կատարվել են, սակայն դրանք չեն գերազանցում նախատեսված աշխատանքների կեսը)՝ 0.5 միավոր»:

   Մինչդեռ, ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության 3-րդ բաժնի 2-րդ՝ «2. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգը, գնահատման մեթոդաբանությունը» ենթաբաժնի 4-րդ կետով սահմանված գործոնային մոնիթորինգի շրջանակում յուրաքանչյուր միջոցառման կատարման գնահատման արդյունքների սանդղակը չի համապատասխանում զեկույցում նշվածի հետ:

Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մոնիտորինգի ու գնահատման մեթոդաբանության, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ԹԻՀԿ-ն ներկայացրել է առանձին նկատառումներ և առաջարկություններ:
Նկատի ունենալով, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը դեռևս չի ընդունվել՝ ԹԻՀԿ-ն գտնում է, որ պետք է առաջնորդվել կառավարության գործող որոշմամբ սահմանված հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մոնիտորինգի ու գնահատման մեթոդաբանության պահանջներին համապատասխան:

Առաջարկություն

- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2024 թվականի գործողությունների ծրագրի մոնիտորինգն ու գնահատումը իրականացնել ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության 3-րդ բաժնի 2-րդ՝ «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգը, գնահատման մեթոդաբանությունը» ենթաբաժնի պահանջներին համապատասխան:
- Զեկույցում գործոնային և վերջնական արդյունքների գնահատականները վերանայել՝ համապատասխանեցնելով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված մեթոդաբանության պահանջներին:

4. Զեկույցի ներածությունում նշված է, որ «...վերլուծվել են Հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումից (2023 թ.) մինչև օրս իրականացված բարեփոխումների արդյունքում փաստացի գրանցված արդյունքները, վիճակագրական տվյալները, **ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքները**, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների գնահատման արդյունքները»: Նախ, Զեկույցը պետք է հրապարակվեր քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված առաջարկությունների ու գնահատումների հիման վրա, մինչդեռ այդ դրույթը հաշվի չի առնվել: Արդյունքում պարզ չէ, թե նախարարությունը ինչպես է գնահատել քաղաքացիական հասարակության կողմից կատարված աշխատանքները:

Առաջարկություն

- Սույն զեկույցը չհամարել վերջնական հրապարակված, այլ միայն դիտարկել նախագիծ: Համապատասխան լրացումներ կատարել Արդարադատության նախարարության կայքէջում հրապարակված զեկույցի տիտղոսաթերթում:

5. Զեկույցի ներածությունում նշված է, որ «(Զեկույցի) Եզրափակիչ մասում ամփոփված են մոնիթորինգի և գնահատման արդյունքները, բացահայտված խնդիրները, ինչպես նաև ներկայացված են բացահայտված խնդիրների և մարտահրավերների լուծման հնարավոր ուղիները»: Նման պահանջ սահմանված է նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության 3-րդ բաժնի 2-րդ՝ «2. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգը, գնահատման մեթոդաբանությունը» ենթաբաժնի 10-րդ կետով «Մոնիթորինգի և գնահատման տարեկան զեկույցը ներառում է նաև հայտնաբերված թերությունները և բացթողումները, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները»: Ինչպես վկայում է զեկույցի կառուցվածքը, զեկույցը չունի եզրափակիչ մաս, առավելապես, զեկույցի մյուս հատվածներում ևս՝ թե՛ վերջնական արդյունքների մոնիտորինգի և թե՛ գործողությունների մոնիտորինգի բաժիններում, բացակայում են մոնիտորինգի արդյունքները, բացահայտված խնդիրները, նշված խնդիրների ու մարտահրավերների լուծման ուղիները և դրանց հաղթահարման մասով առաջարկությունները:

Առաջարկություն

- Զեկույցի կառուցվածքում նախատեսել եզրափակիչ մաս, որում ներկայացնել մոնիտորինգի արդյունքները, բացահայտված խնդիրները, նշված խնդիրների ու մարտահրավերների լուծման ուղիները և հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրում փոփոխությունների ու լրացումների կատարման վերաբերյալ առաջարկությունները:

6. Զեկույցը շարադրված է ընդհանրական ձևով՝ երբեմն առանց կոնկրետ թվերի, փաստերի ու գործողությունների ու վերջնարդյունքների կատարումը հավաստող հղումների: Կատարված գործողությունների որակական գնահատում հնարավոր չէ իրականացնել ստուգման միջոցներին հասանելիության բացակայության պատճառով: Զեկույցի շարադրանքում առկա են ոճական հակասություններ, ինչը երբեմն դժվարացնում է դրա ընկալումը և գնահատումը (սա թերևս 2024 թ. առաջին և երկրորդ կիսամյակային հաշվետվությունների՝ առանց համապատասխան խմբագրումների միավորման հետևանք է):

Առաջարկություն

- Զեկույցի շարադրանքը խմբագրել, այն սկզբունքորեն կրճատել, շարադրել միասնական ոճով, բոլոր եզրահանգումներն ու կատարված գործողությունների գնահատականները հիմնավորել կոնկրետ թվերով ու փաստերով:

Զեկույցի արդյունքային մոնիտորինգի բաժին

7. Զեկույցի «Արդյունքային մոնիթորինգ» բաժնում նշված է, որ այն իրականացվել է՝ հաշվի առնելով հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները: Մինչդեռ, ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը կառուցված է ըստ ռազմավարական 5 նպատակների ու դրանք գնահատող վերջնարդյունքների: Վերջինս պահանջում է, որ հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքային մոնիտորինգը

իրականացվի ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված ռազմավարական նպատակների վերջնարդյունքների գնահատման միջոցով: Հակառակ դեպքում, այն կվերածվի հաշվետվության, որտեղ կնկարագրվի, թե նշված ուղղություններով ընդհանրապես ինչ է արվել՝ առանց գնահատելու նախանշված վերջնարդյունքներին հասնելու միտումներն ու ձեռքբերումները, խնդիրներն ու դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները:

Առաջարկություն

- Զեկույցի «Արդյունքային մոնիտորինգ» բաժինը կառուցել ըստ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի ռազմավարական նպատակների և դրանցում ներառված վերջնարդյունքների առաջընթացի գնահատման:

8. Զեկույցի «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի ամրապնդում» ենթաբաժնի ներքո որպես վերջնարդյունքներ ներկայացված են 1.13-րդ, 1.18-րդ և 1.20-րդ, ինչպես նաև 1.17-րդ գործողությունների 2024 թվականի համար նախանշված կատարողական թիրախային նպատակների կատարման ուղղակի արդյունքները, որոնք ամբողջովին չեն բնութագրում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման ռազմավարական նպատակով սահմանված համապատասխան վերջնարդյունքների առաջընթացը: Ավելին, նշված գործողությունների կատարման վերջնարդյունք է ներկայացված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Ընտրական համակարգերի միջազգային հաստատության աջակցությամբ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի մշակումը: Միաժամանակ, կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման վերջնարդյունքների գնահատման բաժնում տեղադրված են առանձին պարբերություններ, որոնք վերաբերելի են 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությանը, որոնք չեն բնութագրում նոր ռազմավարությամբ սահմանված վերջնարդյունքների կատարման մակարդակները:

Առաջարկություն

- Զեկույցի «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի ամրապնդում» ենթաբաժնի նյութը շարադրել ըստ հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված կոռուպցիայի կանխարգելման ռազմավարական նպատակների 12 վերջնարդյունքների առաջընթացի՝ արձանագրելով նաև բացերը, առկա մարտահրավերները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները:
- Զեկույցի նշված բաժնից դուրս բերել 2019-2022 թվականներին ընդունված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ պարբերությունները:

9. Զեկույցի «**Կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործում**» բաժնում նույնկերպ, ինչպես կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման ռազմավարական նպատակի ներքո, միայն դիտարկված են առանձին գործողություններով իրականացված աշխատանքները: Մինչդեռ դրանք համադրված չեն նշված ռազմավարական նպատակի վերջնարդյունքների հետ: Մասնավորապես, զեկույցում նշված է, որ «2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-

հետախուզական գործառույթներ իրականացնող 120 պաշտոններից համալրված է 77-ը, ինքնավար 80 պաշտոններից՝ 71-ը»: Մինչդեռ, բազմաթիվ մրցույթների արդյունքում ապահովվել է ընդամենը կոմիտեի հաստիքների համալրման 64 տոկոսանոց շեմը, որը ցածր է վերջնարդյունքում սահմանված 80 տոկոսանոց շեմից: Այսինքն, սահմանված վերջնարդյունքը՝ համալրման 80 տոկոսանոց շեմը, դեռևս հաղթահարված չէ:
Զեկույցի նշված բաժնում հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների, հակակոռուպցիոն դատարանի դատավորների և դատախազների վերապատրաստումների վերաբերյալ վերջնարդյունքների կատարման մակարդակները ներկայացված են բացարձակ թվերով և վերապատրաստման դասընթացների անվանումների թվարկումներով, որոնք կրկնում են գործոնային մակարդակում համապատասխան գործողության ուղղակի արդյունքները: Բացի այդ, նշված գործողություններից պարզ չէ, թե սահմանված վերջնարդյունքի կատարման մակարդակը ինչպիսին է: Օրինակ, որպեսզի պատկերացում կազմենք. «**Կոռուպցիայի հակազդման իրավապահ մարմիններում ներդրված են վերապատրաստման/պատրաստման ծրագրերը: 2025 թվականի ավարտին դատախազների առնվազն 60 %-ը վերապատրաստվել է**» կամ «**Հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 50 %-ը վերապատրաստվել է, իսկ մյուս դատարանների դատավորների առնվազն 80 %-ը վերապատրաստվել է կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաներով» վերջնարդյունքներին** հասնելու միտումը, ապա անհրաժեշտ է ունենալ հակակոռուպցիոն կոմիտեի, հակակոռուպցիոն դատավորների ու դատախազների վերապատրաստման մակարդակները՝ տոկոսային հարաբերակցությամբ: Զեկույցում բացակայում է վերջնարդյունքներին հասնելու խոչընդոտները, անելիքներն և ապահովմանը միտված առաջարկությունները:

Առաջարկություն

- Զեկույցի «Կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործում» ենթաբաժնի նյութը շարադրել ըստ հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված կոռուպցիայի հակազդման ռազմավարական նպատակների 11 վերջնարդյունքների առաջընթացի՝ արձանագրելով նաև բացերը, առկա մարտահրավերները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները:
- Վերջնարդյունքների առաջընթացի գնահատումը իրականացնել համեմատական ցուցիչներով կատարման կամ առաջընթացի մակարդակը գնահատելու համար՝ ապահովելով վերջնարդյունքներին հասնելու խոչընդոտների բացահայտման և դրանց վերացմանը միտված առաջարկությունների ներկայացումը:

10. Զեկույցի «Հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործում» բաժնում համանման կերպով, ինչպես և կոռուպցիայի կանխարգելման ու կոռուպցիայի հակազդման ռազմավարական նպատակների ներքո, միայն թվարկված են 2024 թվականի ընթացքում գործողությունների ծրագրով նախանշված հակակոռուպցիոն կրթական ծրագրերի ու և իրազեկման միջոցառումները: Մասնավորապես, զեկույցի նշված բաժնում արձանագրված է, որ «2024 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նշյալ ուղղությամբ տարվել են մի շարք

աշխատանքներ»: Այստեղ «մի շարք» գնահատականը չունի քանակական և որակական բնութագրիչ:
Բացի այդ, նշված բաժնի գործողությունների գերակշիռ մասի դեպքում քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովված չի եղել: Առնվազն ԹԻՀԿ և այլ ոլորտային գործընկեր ՔՀԿ ներկայացուցիչների օրինակով կարելի է փաստել, որ այդ մասնակցությունն ապահովվել է եզակի դեպքերում միայն: Որոշ գործողությունների (3.1, 3.10, 3.13) դեպքերում՝ որպես դրանց կատարումը հավաստող փաստեր, ներկայացված են նախքան ռազմավարության մեկնարկը կատարված աշխատանքները: Առանձին գործողություններ (3.1, 3.4, 3.9 և այլն) իրականացվել են ամբողջությամբ՝ առանց դրա իրականացման պիլոտային/փուլային ընթացքը պահպանելու: Պիլոտային փուլի անտեսման հետևանքով անհնարին է դառնում քաղած դասերի գնահատման հիման վրա գործողությունների ընթացիկ բարելավումը:

Առաջարկություն

- Զեկույցի «Հակակոռուպցիոն կրթություն և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործում» ենթաբաժնի նյութը շարադրել ըստ հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված հակակոռուպցիոն կրթության ռազմավարական նպատակների ակնկալվող 5 վերջնարդյունքների առաջընթացի՝ արձանագրելով նաև բացերը, առկա մարտահրավերները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները:
- Զեկույցից դուրս բերել ընդհանրական ոչ չափելի գնահատականները, որոնք բնորոշ են հռետորաբանական փաստաթղթերին:

11. Զեկույցի արդյունքային մոնիտորինգի բաժնում բացակայում է «**գործարար բարեվարքություն, գործարար իրավունքների պաշտպանություն և պետություն-բիզնես վարչարարության դյուրացում**» և «**հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործում**» ռազմավարական նպատակների վերջնարդյունքների առաջընթացի գնահատմանը վերաբերելի ենթաբաժինները:

Առաջարկություն

- Զեկույցի «Արդյունքային մոնիտորինգ» բաժինը լրացնել «Գործարար բարեվարքություն, գործարար իրավունքների պաշտպանություն և պետություն-բիզնես վարչարարության դյուրացում» և «Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործում» ռազմավարական նպատակների համապատասխանաբար 7 և 8 վերջնարդյունքների առաջընթացի գնահատմանը վերաբերելի ենթաբաժիններով՝ ապահովելով արձանագրված բացերի, առկա մարտահրավերների և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

12. Զեկույցի արդյունքային մոնիտորինգի բաժնում շարադրված է «Միջազգային պարտավորությունների գնահատման զեկույցների անդրադարձը հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգին» վերնագրով առանձին բաժին, որում ներկայացված են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի, Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 4-րդ և 5-րդ փուլերի հանձնառությունների,

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը:
Ընդհանուր առմամբ, զեկույցում՝ այն էլ ռազմավարական նպատակների վերջնարդյունքների մասում, նման առանձին բաժին ունենալու նպատակահարմարությունը վիճարկելի է: Մասնավորապես, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգը, գնահատման մեթոդաբանությունը» բաժնում չի նշվում միջազգային պարտավորությունների գնահատման զեկույցների մասով հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգին անդրադարձի մասին: Մեթոդաբանության առաջին կետը սահմանում է, որ ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանումը ռազմավարության մոնիտորինգը իրականացնում է՝ հիմք ընդունելով նաև «հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների շրջանակներում Հայաստանի գնահատման զեկույցների հասանելի այլ տեղեկությունները»: Հետևաբար, միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների զեկույցների տեղեկատվությունը նպատակահարմար է ներառել յուրաքանչյուր վերջնարդյունքի կամ գործողության կատարման ներքո, եթե առկա է նման անհրաժեշտություն, և այդ տեղեկատվությունը կօգնի մոնիտորինգի գործընթացին ու ազդեցություն կունենա գնահատման ցուցիչի վրա: Բացի այդ, ՀՀ հակակոռուպցիոն ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների մոնիտորինգի և դրանց կատարման վերաբերյալ զեկույցները առանձին-առանձին տեղադրվում են ՀՀ արդարադատության նախարարության կայքէջում և ենթակա են ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն խորհրդում քննարկման:

Առաջարկություն

- Զեկույցը չծանրաբեռնել ավելորդ նկարագրողական տեղեկատվությամբ. այն շեղում է հիմնական մոնիտորինգի գործընթացից՝ հատկապես ռազմավարության գործողությունների կատարմանը չմիտված միջազգային պարտավորություններով:
- Որպես ինքնուրույն բաժին զեկույցից հանել «Միջազգային պարտավորությունների գնահատման զեկույցների անդրադարձը հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգին» վերնագրով նյութը:
- Եթե միջազգային պարտավորությունները որոշակի ազդեցություն կամ կապ ունեն ռազմավարական նպատակի վերջնարդյունքը ապահովող կոնկրետ գործողության հետ, ապա առաջարկվում է նշված հանձնարարությունները ներառել կամ միավորել ռազմավարական նպատակի կոնկրետ գործողության ներքո:

13. Զեկույցի «Արդյունքային մոնիտորինգ» բաժնի «Հակակոռուպցիոն քաղաքականությանը քաղաքացիական հասարակության ներգրավվածություն և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների այլընտրանքային գնահատում» ենթաբաժնում նկարագրված է հակակոռուպցիոն ռազմավարության մշակման, հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրով նախատեսված իրավական ակտերի նախագծերի քննարկման աշխատանքային խմբերում, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ծրագրերում քաղաքացիական հասարակության միավորումների մասնակցությունը: Նշված բաժնում ներկայացված տեղեկատվությունը և կատարված աշխատանքների շրջանակը համահունչ չեն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ռազմավարական նպատակներին ու չեն բխում

կոնկրետ գործողություններից կամ ռազմավարական նպատակների ակնկալվող վերջնարդյունքներից:

Առաջարկություն

- Զեկույցի «Հակակոռուպցիոն քաղաքականությանը քաղաքացիական հասարակության ներգրավվածություն և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների այլընտրանքային գնահատում» վերտառությամբ ենթաբաժինը դուրս բերել «Արդյունքային մոնիտորինգ» բաժնից:
- Քաղաքացիական հասարակության ներգրավվածության և մասնակցության հարցերը առավել նպատակահարմար է շարադրել «Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործում» ռազմավարական նպատակի 3-րդ և 8-րդ վերջնարդյունքների ներքո:

Զեկույցի գործոնային մոնիտորինգի և գնահատման բաժին

14. Կոռուպցիայի կանխարգելման մասնավոր նպատակների ներքո սահմանված գործողությունները ունեն օրենսդրական ակտերի նախագծերի մշակման պահանջ: Դրանց կատարման կարգավիճակների գնահատման իրականացման ժամանակ հաճախ հաշվի է առնվում այն հանգամանքը, որ մշակված օրենսդրական ակտի նախագիծը «նախատեսվում է դնել շրջանառության 2025 թվականին», որի արդյունքներով էլ գնահատվել է «մեծամասամբ կատարված» կամ «ամբողջական կատարված»: Արդյունքում ունենք ոչ համարժեք գնահատում, որը արհեստականորեն ուռճացնում է կատարողական թիրախի կատարման գնահատականը: Բացի այդ, 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.8, 1.9, 1.10, 1.19, 1.21, 1.23, 1.25 գործողությունների ուղղակի արդյունքային ցուցանիշներով կատարումը, կատարողական թիրախի կատարման միևնույն պահանջի պայմաններում, մի դեպքում գնահատվել է «մասնակի կատարված», մյուս դեպքում՝ «ամբողջությամբ կատարված»: Բացի այդ, հաճախ գործողությունների կատարման կարգավիճակի գնահատականները ձևավորված են նախորդ տարիների ընթացքում մշակված օրենսդրական ակտերը ՀՀ ԱԺ-ի կողմից 2024 թվականին ընդունելու հանգամանքով: Նշված պայմաններում նույնպես ուռճացված են գործողության կատարողականի թիրախի կատարման գնահատականը: Օրինակ, 1.13 գործողությունը գնահատված է «մեծամասամբ կատարված», որը չի բխում 2024 թվականի գործողության կատարողական թիրախից:

Առաջարկություն

- Վերանայել գործողությունների կատարման պատասխանատու կատարողների ինքնագնահատման ժամանակ ցուցաբերած սուբյեկտիվ մոտեցումները և համապատասխան փոփոխություններ կատարել կատարողական թիրախի կատարման կարգավիճակի գնահատականներում:
- Նախորդ տարիների գործողությունների առաջընթացի գնահատականները, եթե դրանք չեն բխում տվյալ տարվա գործողությունների կատարողական թիրախներից, դուրս բերել տվյալ տարվա գործոնային մոնիտորինգի բաժնից, և առաջընթացը գնահատել զեկույցի վերջնարդյունքների բաժնում:
- Գործոնային մոնիտորինգի ու գնահատման բաժնում, հիմք ընդունելով ԹԻՀԿ-ի կողմից ռազմավարության գործողությունների կատարման կարգավիճակի վերագնահատված արդյունքները, համապատասխան փոփոխություններ կատարել

նաև գործողությունների գործոնային մոնիտորինգի վերջնական գնահատման աղյուսակում (Հավելված 2):

15. Ռազմավարության գործողությունների կատարման գնահատման ձևաթղթի «Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը» բաժնում գործողությունների կատարման փաստացի արդյունքը ներկայացված է՝ առանց օրենսդրական ակտի նախագծի բովանդակային լուծումների նկարագրության, որի արդյունքում ունենում ենք տարբեր գործողությունների կատարման միևնույն սխեմատիկ նկարագրությունը, այն է՝ նախագիծը մշակված է, հաշվի է առնված միջազգային փորձը, հանրային քննարկման է դրված e-draft հարթակում կամ աշխատանքային խմբում է քննարկվել և ներկայացվել է ՀՀ կառավարություն, այժմ գտնվում է լրամշակման փուլում: Որոշ, հազվադեպ դեպքերում, ներկայացված են երկու գերատեսչությունների իրարամերժ մոտեցումները միևնույն նախագծի վերաբերյալ: Նշված պայմաններում գործոնային մոնիտորինգը հանգում է կատարողական թիրախի սոսկ գնահատականի ներկայացմանը:

Առաջարկություն

- Ռազմավարության գործողությունների կատարման գնահատման ձևաթղթի «Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը» բաժնում ներկայացնել օրենսդրական ակտով կատարողական թիրախի բովանդակությունը և ակնկալվող համապատասխան փոփոխությունները:

16. Ռազմավարության գործողությունների կատարման գնահատման ձևաթղթի «Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները» բաժնում գործողությունների ճնշող մեծամասնության դեպքում նշված է «առկա չեն» պատասխանը: Մինչդեռ, օրինակ կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության կատարելագործման մասնավոր նպատակների ներքո սահմանված 1.1-ից 1.25 գործողություններից ընդամենը 2 գործողության (1.6 և 1.21) մասով է նշված տարբերվող գրառում, որոնցում արձանագրված է, որ «կատարողական թիրախները չեն բխում նախատեսված գործողություններից» կամ «կատարողական թիրախները կարիք ունեն վերանայման»: Այդուհանդերձ, եթե նկատի ունենանք, որ 2024 թվականի համար կատարողական թիրախներով սահմանված ՀՀ արդարադատության նախարարության, ԿԿՀ-ի կամ այլ պատասխանատու գերատեսչության կողմից, նույն կոռուպցիայի կանխարգելման մասով, մշակված օրենսդրական ակտերի նախագծերը կառավարության կողմից հավանության չեն արժանացել, կամ դրանք միայն մնացել են e-draft հարթակում քննարկման փուլում, ինչպես նաև նախագծերի մեծ մասը՝ ըստ սույն զեկույցի, վերադարձվել են լրամշակման, իսկ քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված առաջարկությունները՝ անպատասխան, ապա կարող ենք եզրակացնել, որ նշված իրավական ակտերի նախագծերը ԱԺ չեն ներկայացվել, հետևաբար առկա են եղել գործողությունը խոչընդոտող կամ կատարումը անհնարին դարձնող կամ կատարումը ձգձգող հանգամանքներ, որոնք պետք է արձանագրվեն և ներկայացվեն կոնկրետ առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ:

Առաջարկություն

- Ռազմավարության գործողությունների կատարման գնահատման ձևաթղթի «Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները» բաժնում ներկայացնել կոնկրետ գործողության կատարումը խոչընդոտող, այդ թվում կառավարության կողմից դրանք հավանության չարժանացնելու, լրամշակման ուղարկելու հանգամանքները և զեկույցում ներկայացնել առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ:

17. Ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման մոտ 80 տոկոսանոց կատարողականի պայմաններում, երբ 2024 թվականին մշակված օրենսդրական ակտերի նախագծերը դեռևս կառավարության կողմից հավանության չեն արժանացել և վերադարձվել են լրամշակման, ապա 2025 թվականին նախատեսված գործողությունների կատարման, մասնավորապես օրենսդրական նոր նախագծերի մշակման դեպքում առաջանալու է օրենսդրական ակտերի նախագծերի ահռելի զանգված, որի կառավարման և կյանքի կոչման համար պահանջվող ժամանակահատվածը խիստ սահմանափակ է: Մասնավորապես, ռիսկային են կառավարության կողմից միայն հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի պահանջների կատարման համար համապատասխան ռեսուրսների առկայությունը և առաջնահերթություն ունենալը: Նկատի ունենալով, որ 2026 թվականը նախընտրական տարի է, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման ժամկետը ավարտվում է 2026 թվականին, ապա ռիսկային է դառնում նման ծավալով օրենսդրական ակտերի քննարկումը և ընդունումը ԱԺ-ի կողմից: Ըստ էության, ԱԺ-ն 2026 թվականին գործնականում աշխատունակ կլինի մինչև մարտ, որից հետո կսկսվի նախընտրական փուլը: Նման պայմաններում խիստ պահանջված է հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի վերանայումը, առավել ևս, որ նման պահանջ սահմանված է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ: ՀՀ արդարադատության նախարարությունը 2024 թվականին շրջանառել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» կառավարության որոշման նախագիծը, որում հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի բաժնին վերաբերելի դրույթների հստակեցման հետ մեկտեղ նախատեսված են նաև որոշ գործողությունների կատարման ժամկետների հետաձգման միջոցառումներ:

Առաջարկություն

- ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» կառավարության որոշման նախագիծը լրամշակել այն հաշվով, որպեսզի գործողությունների ծրագրի իրականացումը գործնականում դառնա իրատեսական: Մասնավորապես, ԹԻՀԿ-ն առաջարկում է ռազմավարական յուրաքանչյուր նպատակի ներքո թողնել 1-ից 3 առանցքային գործողություն, որոնք նշանակալի ազդեցություն կունենան կոռուպցիայի կանխարգելման, հակազդման և հակակոռուպցիոն կրթության ոլորտներում և օրենսդրական փոփոխությունների արդյունքում կապահովեն գործնականում կիրառելի արդյունք: Օրինակ,

կոռուպցիայի կանխարգելման մասով առաջարկում ենք դիտարկել կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա պետական և ՏԻ մարմիններում հակակոռուպցիոն/բարեվարքության ծրագրերի մշակման գործիքակազմի ներդրման գործողության ապահովումը:

- Կամ գնումների գործընթացում շահերի բախման իրավիճակներում բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար նրանց և ընտանիքի անդամների կամ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց մասնակցությամբ ընկերությունների գնումների գործընթացին մասնակցությունը արգելելու գործողությունը:
- Մեկ այլ մոտեցում կարող է դիտարկվել ռազմավարության այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք գործնականում չեն պահանջելու կոնկրետ օրենքներում փոփոխությունների և լրացումների կատարում, այլ ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների իրականացման միջոցով ապահովվելու են գործնականում կիրառելի արդյունքներ: Օրինակ, բարեվարքության ուսումնասիրությունների իրականացումը հանրային ծառայության առանձին տեսակներում (Գործողություն 1.14):

18. «Գործոնային մակարդակում գործողությունների մոնիտորինգ» բաժնի վերաբերյալ ԹԻՀԿ գնահատումները ներկայացված են սույն նկատառումներին կից հավելված 1-ում՝ յուրաքանչյուր գործողության «Ռազմավարության գործողությունների կատարման գնահատման ձևաթղթի գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ» սյունակում՝ **բոլդ**, ***իտալիկ*** տառատեսակով: Գործոնային մակադակում հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի 2024 թվականի կատարողական թիրախների ԹԻՀԿ-ի կողմից գնահատման արդյունքներով ամփոփ գնահատականը կամ ծրագրի կատարման մակարդակը կազմել է 46.7 %, նախարարությունների կողմից կատարված՝ 78,63 %-ի դիմաց: